ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4

ք. Երևան « 14 » օգոստոսի 2020թ.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի, ի դեմս գործադիր տնօրենի Զ. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Կադաստրային քարտեզագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 50 900 000 (հիսուն միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

Փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ	*ՏԵԽՆՈԳԼՈԲ ՍՊԸ*
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5, 0010	*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0026, Գ. Նժդեհի փ. 45շ., 75*
Հ/Հ՝ 1930058282670100	*Հ/Հ2500010645010100*
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	*Արմսվիսբանկ ՓԲԸ*
ՀՎՀՀ՝ 00156064	*ՀՎՀՀ՝ 02276089*
_____ *Հ. Մուրադյան*	_____ *Ա. Մարգարյան*

Հավելված N 1
« 14 » օգոստոսի 2020թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71351490/1	Ներկայացվում է ստորև	դրամ	50 900 000	1	ք. Երևան, Միեր Մկրտչյան 5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 21.12.2020

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաղողի տնկարկների տեղորոշման և աշխարհատեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԱՏՀ) ստեղծման ծառայությունների իրականացման նպատակն է ստեղծել էլեկտրոնային միասնական տեղեկատվական համակարգ, որտեղ կտեղակայվի մշտապես թարմացվող տեղեկատվություն խաղողի տնկարկների, բերքի մշակությամբ, մթերմամբ, պահեստավորմամբ և վերավաճառքով զբաղվող բոլոր շահառու կողմերի մասին:

Կատարողը պետք է Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերի խաղողագործական տարածաշրջանների կադաստրային քարտեզների բազային ու թեմատիկ տեղեկատվության, դաշտային ուսումնասիրությունների, ինչպես նաև արբանյակային բազմասպեկտրալ պատկերների վերլուծության արդյունքների հիման վրա կատարի հետևյալ գործառույթները.

- Նույնականացնի վերոնշյալ մարզերի խաղողի այգիների տեղակայությունն ու նախնական տեղադիրքերը և սահմանները ԱՏՀ ծրագրային միջավայրում,
- հիմնվելով խաղողի այգիների նախնական նույնականացման արդյունքերի վրա՝ իրականացնի օդալուսանկարահանում բազմասպեկտրային տեսախցիկներով, սեփականատիրոջ կադաստրային և ինֆորմացիոն շերտեր պարունակող երկու թվային օրթոֆոտոպլանների ստեղծման նպատակով,
- թվային օրթոֆոտոպլանները պետք է ապահովեն 20 սմ կամ ավելի բարձր լուծաչափ՝ վերոնշյալ շրջաններում խաղողի այգիների տեղակայության, չափերի և սահմանների վերաբերյալ ամբողջական ինֆորմացիա տրամադրելու նպատակով,
- իրականացնի խաղողի տնկարկների սահմանազատում՝ համաձայն տրամադրված չափորոշիչների:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների, հեռազննման մեթոդների, թվային ֆոտոգրամետրիայի, այդ թվում նաև օդալուսանկարահանման միջոցով ստացված պատկերների և դաշտային համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա դասակարգել և քարտեզագրել վերոնշյալ 3 մարզերում առկա խաղողի տնկարկները: Այն իրենից կներկայացնի տարածական տվյալների բազա, որը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ ղեկավարել խաղողագործությունը, գինեգործությունն ու տնտեսության՝ խաղող վերամշակող մյուս ճյուղերը և նպաստել դրանց հետագա կայուն զարգացմանը:

3. ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ծառայության իրականացման համար Կատարողը պետք է օգտագործի արբանյակային բազմասպեկտրալ պատկերներ և կատարի նախնական վերլուծություններ ԱՏՀ և հեռազննման մեթոդներով, ինչպես նաև համապատասխան ճշտություն ապահովվելու նպատակով օգտագործել վերգետնյա բարձր ճշտության տեղորոշման սարքավորումներ (այսուհետ՝ GPS) և օդալուսանկարահանման արդյունքումստացվող օրթոֆոտոհատակագծեր:

4. ՕԴԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Օդալուսանկարահանումը պետք է իրականացվի բազմասպեկտրալ տեսախցիկով, որը ունի առնվազն 5 սպեկտրալ միջակայք. ալիքի նմանատիպ կամ համարժեք երկարությամբ, կապույտ (կենտրոնական՝ 475 նանոմմետր, լայնքը՝ 20 նանոմետր), կանաչ (560Նմ, 20Նմ), կարմիր (668 Նմ, 10Նմ), կարմիր եզր (717 Նմ, 10Նմ) և մերձավոր ինֆրա կարմիր (840Նմ-40Նմ):

5. ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարողը պետք է ձեռք բերի համապատասխան խաղողագործական տարածաշրջանների հասանելի, վերջին թարմացված կադաստրային քարտեզները՝ պաշտոնական տեղեկատվություն տրամադրող աղբյուրից:

6. ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ (ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ)

Արբանյակային բազմասպեկտրալ պատկերների (Sentinel-2 SPOT5,SPOT7 կամ համարժեք արբանյակի 10մ և ավելի բարձր լուծաչափի պատկերներ) բազմասեզոնային սպեկտրալ կոմպոզիտային վերլուծությունների արդյունքում անհրաժեշտ է նույնականացնել խաղողի այգիները ԱՏՀ և հեռազննման համապատասխան մեթոդների և ծրագրային ապահովման միջոցով (ArcMap, QGIS, ENVI և այլն):

Այս ծրագրի շրջանակում խաղողի այգի է համարվում խաղողի վազերի հոմոգեն, շարունակական մշակության տարածքը, որը չի հատում 3մ և ավել լայնություն ունեցող ճանապարհները և բնական խոչընդոտները:

Ծառայությունը պետք է իրականացվի հետևյալ փուլերով՝

6.1. Նախնական դասակարգում (classification)

Այս փուլում Կատարողը իրականացնում է բազմասպեկտրալ արբանյակային պատկերի վերլուծություն և նախնական դասակարգում՝ կիրառելով կոմպոզիտային վերլուծությունների, ինչպես նաև վերծանման այլ մեթոդներ:

6.2. Դաշտային աշխատանքներ

Նախապես դասակարգված արդյունքների հիման վրա անօդաչու կամ այլ թռչող սարքի միջոցովիրականացվում են հանութագրման աշխատանքներ: Կատարվում է նաև վերգետնյա ճշգրտման կետերի ամրացում ու կոորդինատների որոշում բնության մեջ:

6.3. Վերջնական մշակում

Հիմնված նախորդ փուլերի արդյունքների վրա՝ այս փուլում իրականացվում է տվյալների վերջնական մշակում հետևյալ որակական պահանջներին համապատասխան՝

- դասակարգման արդյունքում նույնականացված նվազագույն մակերեսը՝ 0,08 հա,
- դասակարգման ճշգրտության աստիճանը՝ նվազագույնը 96%,

7. ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ

Դասակարգման արդյունքում նույնականացված խաղողի այգիների քարտեզները բաժանվում են խաղողի տնկարկների ըստ հետևյալ կանոնների՝

- Խաղողի տնկարկ է անվանվում այն խաղողի այգին /կամ խաղողի այգու այն մասը/, որն ըստ կադաստրի անշարժ գույքի տվյալների ունի մեկ ծածկագիր:
- Խաղողի տնկարկի մակերեսի հաշվարկից հանվում են խաղողի վազերից ազատ մակերեսները, եթե դրանց մակերեսը ավել է, քան 100 մ^2 /օրինակ շինությունները և այլն/:
- Խաղողի տնկարկի քարտեզի սահմանը ընդգրկում է տնկարկին հարող մակերեսը՝տնկարկի միջվազային հեռավորության կեսի չափով:
- Խաղողի տնկարկի քարտեզին կցվում է վերջինիս տառաթվային տեղեկատվությունպարունակողտեղեկագիրը և, կազմելով տվյալների ընդհանուր շտեմարան, փոխանցվում պատվիրատուին:

Տարածական տվյալների համար որպես կոորդինատային համակարգեր անհրաժեշտ է ընտրել՝ Աշխարագրական - WGS 84 կամ Ուղղանկյուն - WGS 84կամARMREF02:

8. ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐԻ ՏԱՌԱԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱԶՄՈՒՄ

Կատարողը նախորդ փուլերում կատարված աշխատանքների հիման վրա կազմում է խաղողի տնկարկի տառաթվային տեղեկագիրը և կցում է այն տնկարկի ԱՏՀ քարտեզին:

Տնկարկի տեղեկագիրը պետք է պարունակի՝

Տնկարկի նույնականացման տառաթվային ծածկագիրը /չկրկնվող ծածկագիր/, որը գեներացնում է Կատարողը: Այդ ծածկագիրը պետք է պարունակի ինֆորմացիա մարզի, համայնքի, բնակավայրի և այլ տեղորոշիչների վերաբերյալ:

Հողակտորի կադաստրային ծածկագիրը:

Մակերեսը ըստ կադաստրային քարտեզի:

Փաստացի օգտագործվող հողակտորի մակերեսը:

Հավաքագրված տեղեկատվությամբ կազմվում է տնկարկի տեղեկագիրը և կցվում է տնկարկի քարտեզին տվյալների շտեմարանում: Տեղեկագրի ձևը պետք է թույլ տա հետագայում այն լրամշակելու հնարավորություն /առնվազն լրացուցիչ 15 դաշտ/: Յուրաքանչյուր խաղողի տնկարկ կարող է ունենալ միայն 1 /մեկ/ տեղեկագիր:

9. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծրագրի իրականացման բոլոր փուլերում աշխարհագրական (տարածական), տառաթվային տվյալները, որոնք տրամադրվել են Պատվիրատուի կողմից կամ գեներացվել են ծրագրի ընթացքում, պետք է ֆիզիկապես միշտ գտնվեն ՀՀ տարածքում: Կատարողը չի կարող տվյալները փոխանցել 3-րդ անձանց (անհրաժեշտության պարագայում բացառապես պատվիրատուի և անձնական տվյալների սուբյեկտների գրավոր համաձայնությամբ), օգտագործել դրանք ծրագրի գործառույթներից դուրս:

Աշխարհագրական (տարածական), տառաթվային տվյալների սեփականության իրավունքը պետք է պատկանի բացառապես Պատվիրատուին:

Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում նկարահանման աշխատանքների ընթացքում առաջացող սահմանափակումների և խոչընդոտների համար:

10. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ

Կատարողը պարտավորվում է հանձնել ծրագրի ընթացքում իրականացված վերլուծությունների արդյունքները հետևյալ ֆորմատով և տեսքով.

- Սկզբնական չմշակված նկարները բազմասպեկտրալ և RGB տեսքով
- Բազմասպեկտրալ օդալուսանկարահանման արդյունքները 5 ալիքային բազմասպեկտրալ օրտոֆոտոպլանի տեսքով (GeoTIFF Unsigned 16-bit) տարածականճշտությունը 20 սմ կամ ավելի բարձր ճշտությամբ ՝WGS 84 կորդինատային համակարգում:
- Բազմասպեկտրալ օրտոֆոտոպլանը պետք է պարունակի 5 ալիք :
- RGB պատկերիարդյունքները տրամադրվում են 3 ալիքից բաղկացած թվային օրտոֆոտոպլան (GeoTIFF Unsigned 16-bit) տարածականճշտությունը ճշտություն 20 սմկամ ավելի բարձր ճշտությամբ WGS 84 կորդինատային համակարգում:
- Տեղանքի բարձրությունների թվային մոդել (GeoTIFF float 32-bit) ֆորմատով, տարածական ճշտությունը 40 սմ կամ ավելի բարձր:
- Կատարողը տրամադրում է համեմատական վերլուծություն այգիների փաստացի տեղադիրքի կորդինատների, սահմանների և կադաստրային քարտեզների միջև շեղումների մասին, ԱՏՀ թվային շերտերի տեսքով :
- առաջնային և վերջնական մշակման ենթարկված ռաստերային ֆայլեր (TIFF, GEOTIFF),
- դաշտային աշխատանքների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը,
- մասնագիտական նկարագրերը և մեթոդաբանությունը,
- վերջնական դասակարգման վեկտորային ֆայլերը (shapefile),
- աղյուսակային տվյալների բազաները (CSV, XLSX):
- Այգիների տեղեկագրերը պետք է տրամադրվեն պատվիրատույին Թվային օրտոֆոտոպլանին կցված կամ առանձին համարակալած բազայի տեսքով:

Բոլոր հանձնվող նյութերը անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային տարբերակով և կարծր կրիչով:

11. ՕԴԱԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՒ ՖՈՏՈԳՐԱՄԵՏՐԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Աերոֆոտոնկարահանման արդյունքում ստացված նյութերը պետք է ապահովեն 1:2000 մասշտաբի քարտեզների թույլատրելի սահմանային ճշտությունը, որի դեպքում պատկերի էլեմենտների տարածական շեղումը չպետք է գերազանցի առավելագույնը 15սմ բնակավայրերի և 20 սմ ոչ բնակավայրային հատվածների համար լուծաչափը : Ծրագրում պետք է արտացոլված լինեն ծառայությունների մատուցման փուլերը, կիրառվող սարքերի տեխնիկական բնութագրերը, կիրառվող ծրագրային ապահովման նկարագիրը, հիմնավորվեն ծառայությունների կատարման տեսակները, մեթոդները և պարամետրերը, հանութագրվող հատվածների սահմանները: Կատարողը կարող է օգտագործել տարբեր անկյուններից տեսանելի և նկարների վրա լավ նույնականացվող վերգետնյա հսկիչ կետեր, տեղադրել նույնականացման նշաններ: Նույնականացման նշանների տեղադրումը և նրանց կոորդինատների ստացումը պետք է իրականացվի նախքան օդալուսանկարահանման

աշխատանքների կատարումը: Վերգետնյա հսկիչ կետերի կոորդինատների ստացումը պետք է իրականացնել բարձր ճշտգրտություն ապահովող (մինչև 1-2սմ) GPS համակարգերի կիրառմամբ և RTK ռեֆերենց կայանների օգտագործմամբ:

Օդալուսանկարահանումիրականացնողտեխնիկականսարքը պետք է ունենա համապատասխանության սերտիֆիկատ, որը կհաստատի սարքի հնարավորությունները՝ ստանալ տեղանքի 10 սմ ճշտության տվյալներ: Սերտիֆիկատը պետք է տրված լինի նմանատիպ եզրակացություններ և չափումներ իրականացնելու տեխնիկական հնարավորություններ ունեցող կազմակերպության կողմից:

Կատարողն ընդունում է, որ ծառայությունների մատուցման ողջ ընթացքում անվտանգության, տեխնիկական խնդիրների ու խոչընդոտների շտկման և վերացման պարտականությունը և դրանից բխող պատասխանատվությունը կրում է ինքը՝ Կատարողը:

Թռիչքների պլանավորումը և նավիգացիան պետք է իրականացվի ավտոմատացված համակարգերի օգնությամբ: Օդալուսանկարահանում իրականացնող տեխնիկական սարքը պետք է համալրված լինի երկու հաճախություն ունեցող գեոդեզիական ճշտության ընդունիչով, ազդանշանի ֆազային չափման հնարավորությամբ և պետք է ունենա իներցիալ համակարգ՝ IMU: Օդալուսանկարահանման արդյունքում ստացված նկարները չպետք է ունենան հորիզոնական կամ ուղղահայաց կտրվածքներ, նկարահանվող տարածքների դեֆեկտներ(ամպ ,ծուխ) և այլ թերություններ, որոնք կխոչնդոտեն ֆոտոգրամետրիկ աշխատանքների իրականացմանը, կամ կազդեն նրանց որակի վրա: Լուսավորությունը (արևի անկյուն) պետք է լինի $\geq 18^{0}$, իսկ նկարների ծածկույթը՝ ոչ պակաս PX =70%, PY =50%, օդալուսանկարի թեքության անկյունը չպետք է գերազանցի 20^{0}-ը:

Ֆոտոգրամետրիկ մշակումը պետք է իրականացվի լիցենզավորված ավտոմատացված ծրագրային համակարգերի միջոցով, որոնք նախատեսված են օդալուսանկարների մշակման և վերլուծության համար:

Օրթոֆոտոպլանում թույլատրելի է որոշ օբյեկտների դեֆորմացիաներ խոշորացման դեպքում, եթե նրանք նկարահանման պահին գտնվել են շարժման մեջ կամ ունեն փայլող մակերեսներ:

Հաշվիառնելովխաղողիվեգետացիոնժամանակահատվածընևհամապատասխաննկարահանումներ իիրականացմանսեզոնայնությունը, կատարողը պետք է ապահովի օրեկան 1500 հա տարածքի նկարահանում՝ 11:00-15:00 ընկած ժամանակահատվածում:

12. ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նկարահանումը, պատկերների երկրաչափական տրանսֆորմացիան, նյութերի նախնական մշակումը և վերջնական օրթոֆոտոպլանների պատրաստումը պետք է իրականացվի WGS_84 կոորդինատային համակարգում:

Մասնակիցը պետք է ներկայացնի տեխնիկական միջոցների հավաստման հետևյալ փաստաթղթերը:

- Օդալուսանկարահանում իրականացնող տեխնիկական սարքի/սարքերիսերիական համարներ՝ լուսանկարների տեսքով
- Տեսախցիկների՝ տեխնիկական պահանջներին համապատասխանության փաստաթղթեր ,տեսախցիկների անձնագրեր
- Օդալուսանկարահանում իրականացնող տեխնիկական սարքի/սարքերի գեոդեզիական հանույթի ճշտությունը հավաստող սերտիֆիկատ
- Բարձր ճշտության երկհաճախանի GPS սարքի սերիական համարի լուսանկար /սերտիֆիկատ
- Լուսանկարների վերամշակման լիցենզավորված ծրագրային փաթեթի անվանումը և լիցենզիայի համարը:

Ծառայությունների կատարման ժամանակացույց

Նախնական տվյալների հավաքագրում, կադաստրային քարտեզների,արբանյակային պատկերների հավաքագրում և ձեռք բերում: Սպեկտրների իդենտիֆիկացում, արբանյակային նկարներից այգիների նախնական սահմանների և կոորդինատների վերծանում:	3 ամիս
Օդալուսանկարահանման աշխատանքների նախապատրաստում, վերգետնյա հայտնի կետերի տեղադրում: Օդալուսանկարահանման աշխատանքների իրականացում: Դաշտային այցելություններ, կոորդինատների և սահմանների ընտրովի, գործիքային ստուգում:	2 ամիս (վերջնաժամկետ՝ սեպտեմբերի վերջին տասնօրյակ)
Թվային օրթոֆոտոպլանների պատրաստում, շերտերի պատրաստում, այգիների տեղեկագրերիստեղծում:	1 ամիս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5, 0010
Հ/Հ՝ 1930058282670100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00156064

Զ. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

ՏԵԽՆՈԳԼՈԲ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0026, Գ. Նժդեհի փ. 45շ., 75
Հ/Հ2500010645010100
Արմսվիսբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02276089

Ա. Մարգարյան

Հավելված N 2
« 14 » օգոստոսի 2020թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ ամենը
1	71351490/1	Կադաստրային քարտեզագրման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	20 360 000	27 995 000	35 630 000	41 463 000	43 265 000	50 900 000

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5, 0010
Հ/Հ՝ 1930058282670100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 00156064

Ռ. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

ՏԵԽՆՈԳԼՈԲ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0026, Գ. Նժդեհի փ. 45շ., 75
Հ/Հ25000106450100
Արմսվիսբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02276089

Ե. Մարգարյան

Հավելված 3
« 14 » օգոստոսի 2020թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 14 » օգոստոսի 2020թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն